Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ն տրամադրում է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

ՏՆԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ, ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՍԹԱԼՔԻՆԳ

ԱՄՆ բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարություն
Բնակարանային շինարարության վարչություն

OMB-ի հաստատման համարը՝ 2502-0204
Ժամկետը լրանում է՝ 05/31/2011

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

2005թ.-ի ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԼԻԱԶՈՐՄԱՆ ԱԿՏ

ՎԱՐՁԱԿԱԼ	ՎԱՐՁԱՏՈՒ	ՄԻԱՎՈՐԻ ՀԱՄԱՐԸ ԵՎ ՀԱՍՑԵՆ

Սույն վարձակալության պայմանագրի հավելվածը լրացնում է վերոհիշյալ Վարձակալի և Վարձատուի միջև վարձակալության պայմանագիրը հետևյալ պարբերություններով:

Հավելվածի նպատակը

Վերոհիշյալ միավորի վարձակալության պայմանագրում կատարվում է փոփոխություն՝ 2005թ.-ի Կանանց դեմ բռնության և արդարադատության նախարարության վերալիազորման ակտի (VAWA) դրույթներն ընդգրկելու նպատակով:

Հակասություններ վարձակալության պայմանագրի այլ դրույթների հետ

Սույն Հավելվածի դրույթների և Վարձակալության պայմանագրի այլ դրույթների միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է սույն հավելվածին:

Սույն Վարձակալության պայմանագրի հավելվածի ժամկետը

Սույն Վարձակալության պայմանագրի հավելվածը ուժի մեջ է մտնում _____-ին: Սույն Վարձակալության պայմանագրի հավելվածը ուժի մեջ է մնալու մինչև Վարձակալության պայմանագրի դադարեցումը:

VAWA-ի պաշտպանությունները

1. Վարձատուն կարող է չդիտարկել տնային բռնության, ամուսնական բռնության կամ սթալքինգի միջադեպերը որպես «հարգելի պատճառ» վարձակալության պայմանագրի լուրջ կամ կրկնվող խախտումների կամ չարաշահման զոհի օգնության, վարձակալության կամ տիրապետման իրավունքների դադարեցման համար:
2. Վարձատուն կարող է չդիտարկել քրեական արարքը, որն ուղղակիորեն առնչվում է չարաշահման հետ, որում մասնակցում է վարձակալի տնային տնտեսության անդամը կամ որևէ հյուր կամ վարձակալի հսկողության տակ գտնվող այլ անձ, որպես պատճառ օգնության, վարձակալության կամ տիրապետման իրավունքների դադարեցման համար, եթե վարձակալը կամ վարձակալի ընտանիքի անմիջական անդամը հանդիսանում է այդ չարաշահման զոհը կամ վտանգված զոհը:
3. Վարձատուն կարող է պահանջել, որպեսզի զոհը կամ զոհի անունից ընտանիքի անդամը գրավոր հաստատի, որ անձը հանդիսանում է չարաշահման զոհ և որ լրացվի Տնային բռնության, ամուսնական բռնության կամ սթալքինգի հավաստումը՝ Ձևաթուղթ HUD-91066-ը կամ այլ փաստաթղթեր՝ հավաստման ձևաթղթում նշված կարգով, և ներկայացվի 14 աշխատանքային օրվա ընթացքում կամ համաձայնեցված ժամկետում՝ VAWA-ի ներքո պաշտպանություն ստանալու նպատակով: Հավաստման կամ օժանդակ փաստաթղթերի սահմանված ժամկետում չներկայացնելը կարող է հանգեցնել վտարման:

Ստորագրության տողը հանվել է